# Հ Ա Մ Ա Ձ Ա Յ Ն Ա Գ Ի Ր  N 1

## N ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48
## ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

**ք. Երևան** <<30>>. <<05>>. **2025թ.**

ՀՀ ներքին գործերի նախարարությունը, ի դեմս ՀՀ ներքին գործերի նախարարության գլխավոր քարտուղար Ա. Ֆիդանյանի, որը գործում է ՀՀ ներքին գործերի նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Կատարող) ի դեմս Ընկերության տնօրեն ժ/պ Գ.Վարդազարյանի, հիմք ընդունելով 14.02.2024 թվականին կնքված **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48** գնման Պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.5 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը /այսուհետև՝ Համաձայնագիր/ հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի վճարման կարգը

1.1 Սույն Համաձայնագրով Կողմերը համաձայնության եկան և հաստատեցին **ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48** ծածկագրով գնման պայմանագրի 3.3 կետով սահմանված **20 000 000** (քսան միլիոն) ՀՀ դրամ գումարին ավելացնել **5 000 000** (հինգ միլիոն) ՀՀ դրամ, որի արդյունքում ընդհանուր գումարը կկազմի **25 000 000** (քսանհինգ միլիոն) ՀՀ դրամ, հիմք ընդունելով՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշման 56-րդ կետի 2-րդ ենթակետը, որի վճարումը պատվիրատուի կողմից կիրականացնի սույն Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված 1-ին համապատասխան: Գումարը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, ինչպես նաև Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

1.2 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

### 2. Այլ պայմաններ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքներն ու պարտականությունները, Ծառայության մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Սույն Համաձայնագիրը կազմված է (2) երկու էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու բնօրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

2.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն պարտականություններն իրականացնում է ՀՀ ներքին գործերի նախարարությունը:

### 3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**

**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության**
**գործառնական վարչություն**
*Հ/Հ 900011042471*
*ՀՎՀՀ 02882913*
Հեռ. 010 59-61-52
Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am

_______________ Ա. Ֆիդանյան
/ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/
(ստորագրություն)
Կ.Տ

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**

**ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման**
**ազգային կենտրոն» ՓԲԸ**
**ՀՀ ԱՆ <<Կախվածությունների**
**բուժման ազգային կենտրոն>> ՓԲԸ**
**. Երևան Աճառյան փ.2-րդ նրբ. շենք 2**
**ԱյԴի բանկ ՓԲԸ Բաղրամյան մ/ճ**
Հ/Հ 11813017106900
ՀՎՀՀ 00886932
Հեռ.012 27-27-27
Էլ. Փոստ՝ addictions.arm@gmail.com

_______________ Գ.Վարդազարյան
/ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժ/պ/
(ստորագրություն)

*Հավելված N 1*
*<<30>> 05 2025թ.*
*ՀՀ ՆԳՆ ՄԱԾՁԲ-2025/Ա-48 ծածկագրով գնման պայմանագրի*

**Վճարման ժամանակացույց**

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 1 | 85111120/1 | Հիվանդանոցների կողմից մատուցվող բժշկական ծառայություններ | | | | | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | 5 000 000 | **5 000 000** |

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
**ՀՀ ներքին գործերի նախարարություն**
**ք. Երևան, Նալբանդյան 130**
**ՀՀ Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն**
**Հ/Հ *900011042471***
**ՀՎՀՀ *02882913***
**Հեռ. 010 59-61-52**
**Էլ. հասցեն՝ gnumner@mia.gov.am**
**_____________ Ա. Ֆիդանյան**
**/ ՀՀ ՆԳՆ Գլխավոր քարտուղար/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
**ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ**
**ՀՀ ԱՆ <<Կախվածությունների բուժման ազգային կենտրոն>> ՓԲԸ**
**ք. Երևան Աճառյան փ.2-րդ նրբ. շենք 2**
**ԱյԴի բանկ ՓԲԸ Բաղրամյան մ/6**
**Հ/Հ 11813017106900**
**ՀՎՀՀ 00886932**
**Հեռ.012 27-27-27**
**Էլ. Փոստ՝ addictions.arm@gmail.com**
**_____________ Գ.Վարդազարյան**
**/ ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ տնօրենի ժ/պ/**
**(ստորագրություն)**
**Կ.Տ**